ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 19

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի նիստի

20 մայիսի 2014թ.

Նախագահ՝ Ա. Վ. Ցուցուլյան

Քարտուղար՝ Հ. Ս. Գասպարյան

ՕՐԱԿԱՐԳ

1. *2013-14թթ. ուստարվա ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների արդյունքների ամփոփում:*

   /զեկ. Ա. Վ. Ցուցուլյան/

2. *2013-14թթ. ուստարվա II կիսամյակի քննաշրջանի գրաֆիկի հաստատում:*

   /զեկ. Ա. Վ. Ցուցուլյան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկան, խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա. Վ. Ցուցուլյանը:

Ֆակուլտետի խորհրդի նախագահը ներկաներին ծանոթացրեց 2013-14թթ. ուստարվա ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքները. «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտության թվով 12 շրջանավարտներից ամփոփիչ ատեստավորմանը մասնակցեցին 12-ը: Ապահովվել է ամփոփիչ քննությունների և ավարտական աշխատանքների պաշտպանության հետևյալ արդյունքը՝ ըստ համապատասխանության.

,,գերազանց,,-3	,,գերազանց,,-6
,,լավ,,-5	,,լավ,,-2
,,բավարար,,-4	,,բավարար,,-4

«Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտության գծով ապահովվել է հետևյալ արդյունքը.

,,գերազանց,,-2	,,գերազանց,,-3
,,լավ,,-3	,,բավարար,,-2
,,բավարար,,-3	,,լավ,,-3

Երկու մասնագիտությունների գծով անբավարար գնահատական չի գրանցվել:

Զեկուցողը տվեց ընդհանուր հանձնարարական ամբիոններին, որ չպետք է բավարարվել ձեռք բերածով, աշխատել առավելագույնս հաջորդ ուսումնական տարում ապահովելու ավելի բարձր արդյունք: Նա ներկայացրեց նաև, որ «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտության գծով ընդունելություն չի կազմակերպվելու, փոխարենը կազմակերպվելու է «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտության գծով:

Օրակարգի երկրորդ հարցի մասին ֆակուլտետի խորհրդի նախագահ Ա. Վ. Ցուցուլյանը ներկայացրեց 2013-14թթ. ուստարվա II կիսամյակի քննաշրջանի գրաֆիկը, որը կազմվել է համաձայն ուսումնական պլանի: Քննարկվել է կուրսերում, ամբիոններում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Բ/Մ և ինֆորմատիկայի ամբիոնի վարիչ Մ. Ա. Զաքարյանը և ուրիշներ: Նրանք համակարծիք էին ներկայացված ժամանակացույցին և առաջարկեցին հաստատել:

Այնուհետև զեկուցողը հանձնարարեց ամբիոններին քննաշրջանը անցկացնել ըստ հաստատված ժամանակացույցի, կազմակերպել կոնսուլտացիաներ:

ՈՐՈՇԵՑԻՆ-1.Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2013-14թթ. ուստարվա քննաշրջանի գրաֆիկը:

ՆԱԽԱԳԱՀ **Ա. Վ. ՑՈՒՑՈՒԼՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ **Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ**